

ՄՇՏԱԿԱՆ ՌԵՆՏԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

, որը բնակվում է _____

ազգանունը, անունը
հասցեում, անձնագրի սերիան _____ թիվ _____, տրված _____
կողմից « _____ » _____ թ., այսուհետ՝ «Ռենտա ստացող», մի կողմից, և _____,

որը բնակվում է _____ հասցեում, անձնագրի սերիա _____ թիվ _____,
տրված _____ կողմից « _____ » _____ թ., այսուհետ՝ «Ռենտա վճարող», մյուս
կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Ռենտա ստացողը Ռենտա վճարողին սեփականության իրավունքով հանձնում է

գույք, այսուհետ՝ «Գույք», իսկ Ռենտա վճարողը պարտավորվում է այդ գույքի դիմաց Ռենտա ստացողին պար-
բերաբար վճարել ռենտա՝ որոշակի գումար:

1.2. Ռենտա վճարողը պարտավոր է ռենտան վճարել անժամկետ:

1.3. Սույն պայմանագրի գույքը Ռենտա ստացողին է պատկանում սեփականության իրավունքով, ինչը հաս-
տատվում է _____:

1.4. Գույքը Ռենտա ստացողին է հանձնվում սույն պայմանագիրը նոտարական կարգով վավերացնելու հաջորդ
փաստաթղթի անվանումը
օրը:

1.5. Սույն պայմանագրից բխող սեփականության իրավունքը Ռենտա վճարողի մոտ ծագում է Գույքը նրան
հանձնելու պահից (անշարժ գույքի դեպքում՝ այդ իրավունքի պետական գրանցման պահից):

2. Գինը

2.1. Համաձայն _____,

փաստաթղթի անվանումը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրվել

Գույքի գինը կազմում է _____ (_____) դրամ:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Ռենտա վճարողը պարտավոր է ռենտան վճարել յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը՝
_____ դրամ:

Վճարվող ռենտայի չափն ավելացվում է սահմանված նվազագույն աշխատավարձի չափի ավելացմանը համա-
պատասխան:

3.2. Ռենտա վճարողը պարտավոր է հօգուտ Ռենտա ստացողի ապահովագրել վերջինիս հանդեպ իր պարտա-
վորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու պատասխանատվության ռիսկը:

4. Ռենտա վճարողի պատասխանատվությունը

4.1. Վճարի յուրաքանչյուր օրվա կետանցի համար Ռենտա վճարողը Ռենտա ստացողին վճարում է տույժ՝
վճարման ենթակա գումարի _____ տոկոսի չափով:

4.2. Գույքն այլ անձի սեփականությանը հանձնած Ռենտա վճարողն այդ անձի հետ սուբսիդիար պատասխա-
նատվություն է կրում Ռենտա ստացողի պահանջներով, որոնք ծագել են սույն պայմանագրի պայմանների խախ-
տման հետևանքով:

4.3. Գույքի պատահական կորստի կամ վնասվածքի դեպքում Ռենտա վճարողն իրավունք ունի պահանջել դա-
դարեցնելու սույն պայմանագրով նախատեսված պայմաններով ռենտա վճարելու պարտավորությունը կամ փո-
փոխելու այն վճարելու պայմանները:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ- ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրից բխող պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար
կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք,
որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:
Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության
հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադա-
րեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրից բխող պար-
տավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավե-
լի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պա-
հելով մյուս կողմին:

6. Պայմանագրի լուծարումը Ռենտա ստացողի պահանջով

6.1. Ռենտա վճարողի կողմից սույն պայմանագրի էական խախտման դեպքում Ռենտա ստացողն իրավունք ու-
նի Ռենտա վճարողից պահանջել հետ գնելու ռենտան:

6.2. Ռենտա ստացողն իրավունք ունի Ռենտա վճարողից պահանջել հետ գնելու ռենտան, եթե՝

6.2.1. Ռենտա վճարողն ավելի քան մեկ տարի կետանցել է ռենտայի վճարը.

6.2.2. առաջացել են հանգամանքներ, որոնք ակնհայտ վկայում են, որ ռենտան չի կարող վճարվել պայմանա-
գրով սահմանված չափով և ժամկետներում.

6.2.3. ռենտայի վճարի դիմաց հանձնված անշարժ գույքն անցել է ընդհանուր սեփականության կամ բաժանվել
է մի քանի անձանց միջև :

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Մինչև սույն պայմանագիրը կնքելը Ռ-ենտա ստացողը Գ-ույթը ոչ ոքի չի վաճառել, գրավ չի դրել, այն վեճի առարկա չէ և արգելադրված չի եղել:

7.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակում:

8. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Ռ-ենտա ստացող

ստորագրություն

Ռ-ենտա վճարող

ստորագրություն

Նոտարական գրասենյակի մակագրությունը՝ _____